ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԼԻՔՈՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի համաշխարհային սոցիալիստական սիստեմի էկոնոմիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՀՐԱՆՅԱՆԻ անունը այսօր մեծ մասսայականություն է վայելում գործընկերների, քաղաքագետների և ընթերցողների շրջանում։ Նրա ստորագրությամբ հոդվածներ հաճույքով տպագրում են մոսկովյան և ուրիշ գրական-գեղարվեստական հանդեսները, հասարակական գիտությունների պարբերական հրատարակությունները, թերթերը հրապարակում են նրա ընդարձակ, նորարարությամբ աչքի ընկնող հարցազրույցները։ Նրա ծրագրային հոդվածներից մեկը՝ «Երկար ճանապարհ դեպի եվրոպական տուն», տոտալիտարիզմից դեմոկրատիայի անցնելու պրոբլեմների մասին է և լույս է տեսել «Նովի միր» հանդեսի յոթերորդ համարում։

Քանի որ Ա. Միհրանյանը մեր թերթում տպագրվում է առաջին անգամ, ուստի և հաղորդում ենք համառոտ կենսագրական տեղեկություններ։

Ծնվել է Երևանում։ 1967 թ. ավարտել է Թելմանի անվան հայկական դպրոցը, հետո՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը։ Մասնագիտացել է ԱՄՆ-ի գաղափարախոսական ու քաղաքական պրոցեսների գծով։ Պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Այնուհետև, մինչև վերակառուցման սկիզբը, զբաղվել է դեմոկրատիայի տեսության պրոբլեմներով։ Վերջերս Քաղհրատը լույս ընծայեց Ա. Միհրանյանի «Դեմոկրատիան և բարոյականությունը» գրքույկը։ Ներկայումս երիտասարդ գիտնականն աշխատում է «Դեմոկրատիան, պատմությունը և արդիականությունը» գրքի վրա։ Այդ աշխատանքը միաժամանակ նաև դոկտորական դիսերտացիա է, որի պաշտպանությունը մի քիչ երկարաձգեցին մեր երկրում տեղի ունեցող վերակառուցման պրոցեսները։

Հրապարակվող հոդվածում, որը գրված է հատուկ «Երեկոյան Երևանի» համար, հեղինակը անհատական դիտարկումների հիման վրա անդրադառնում է ղարաբաղյան շարժմանն առնչվող մի շարք հարցերի։

ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի նստաշրջանի հայտնի որոշումը նոր չափանիշ մտցրեց մեր քաղաքական համակարգում։ Ապագայում թերևս պատմաբաններն ու քաղաքագետները պատշաճը կհատուցեն ղարաբաղյան շարժման մասնակիցներին, հենց որ վերակառուցումը նկատելի հաջողությունների հասնի իր ճանապարհին։ Այդ որոշմամբ է մեր երկրում բացվում քաղաքականության ոլորտը։ Դրանից է սկսվում իրավական պետության ուղղությամբ կատարված առաջին քայլը։ Սկսվում է հասարակության կյանքի այն փուլը, երբ ժողովուրդը փորձում է տնօրինել սեփական ճակատագիրը։

Թեև 1985 թ. մարտից սկսված վերակառուցման պրոցեսը նախադրյալներ էր նախապատրաստում ԼՂԻՄ-ի մարզխորհրդի չհրահանգավորված նստաշրջանի նման երևույթների համար, այդուհանդերձ, ինչպես երկու հանրապետությունների (Ադրբեջան, Հայաստան) իշխանությունները, այնպես էլ կենտրոնական իշխանությունը, դրան բոլորովին պատրաստ չէին։ Հին կարգերի օրոք իշխանությունն իրականացվում էր միայն մեկ ուղղությամբ՝ վերից վար։ Հակառակ ուղղությամբ ցանկացած շարժում համաձայնեցվում և արտոնվում էր դարձյալ վերևից։ Այսինքն՝ վերադասը ստորին կառույցներում ստեղծում էր այն պահանջներն ու պահանջմունքները, որոնք ինքը ցանկանում էր և ի վիճակի էր քննության առնել։ Այն ամենը, ինչն առաջանում էր վերևից տրված հրահանգից դուրս, բռնությամբ հանվում էր հասարակական կյանքից։ Այսպիսով, առաջին անգամ խարխլվեց աստիճանակարգային հարաբերությունների բացարձակապես փակ համակարգը, երբ վերևից տրվում են միայն հրամաններ, իսկ ներքևից՝ միայն խնդրանքներ ու շնորհակալություններ։

Կենտրոնական իշխանության առաջին արձագանքը, թեև ոչ լրիվ, հին ավանդույթների ոգով էր։ Հրապարակայնության քաղաքականությունը և դեպի իրավական պետություն մեր շարժման նպատակի հռչակումը թույլ չտվեցին լրիվին արձագանքել հին ոճով. անհապաղ ի հայտ բերել շարժման ղեկավարներին, կատարել ձերբակալություններ, փոխել մարզի ամբողջ ղեկավարությունը, գործի գցել զանգվածային լրատվության միջոցների թափանիվը՝ «հարկավոր» հասարակական կարծիք ստեղծելու համար։ Վերակառուցման և հրապարակայնության պայմաններում, երբ երկրի կյանքի դեմոկրատացման հույսեր էին առաջացել, պրոբլեմի բռնի լուծման տարբերակը կնշանակեր վերակառուցման և կուսակցության ու պետության ամբողջ նոր կուրսի ավարտ։ Ես խորամուխ չեմ լինի բուն ղարաբաղյան պրոբլեմի մանրամասների մեջ։ Հենց շարժման սկզբնավորման և տվյալ պրոբլեմի պատմական, իրավաբանական ու բարոյական կողմերի մասին քիչ չի խոսվել ու գրվել։ Ես կանդրադառնամ միայն ճգնաժամային իրավիճակի առաջացման նկատմամբ կենտրոնական իշխանության արձագանքին։

Նույնիսկ կողմնակի դիտորդի համար արդեն ակնբախ է դարձել, որ Մոսկվայի առաջին արձագանքը լրիվ անհամապատասխան էր երկրում և հասարակության մեջ ստեղծված նոր իրավիճակին։ Այն ձևակերպված էր հին ոգով և նախատեսված էր առաջվա պես կենտրոն-ծայրամաս հարաբերություններում առկա միաձայնության համար։ Այդ արձագանքում հաշվի չէր առնվում, որ ապարատային-բյուրոկրատական պատասխանը չի համապատասխանում նոր իրողությանը, քանի որ ճգնաժամի մասնակիցները արդեն բացել էին նոր ալիք՝ հրապարակային քաղաքականության ալիքը, և բոլորովին չեն պատրաստվում հրաժարվել իրենց պրոբլեմները քաղաքականության ոլորտ տեղափոխելու ընձեռված հնարավորությունից և առնվազն հասնելու գոյություն ունեցող պրոբլեմի ու շահի ճանաչման և պատրաստ են իրենցից կախված ամեն ինչ անել, որ տվյալ պրոբլեմը քննարկվի իշխանության համապատասխան մարմինների կողմից։ Կենտրոնական իշխանության առաջին խոշոր սխալը, որը բխում էր պրոբլեմի առկայությունը կամ բացակայությունը անձամբ որոշելու իր բազմամյա պրակտիկայից, այն էր, որ իներցիայով ի լուր ամենքի հայտարարվեց, թե ոչ մի պրոբլեմ չկա։ Հայտարարվեց, որ ղարաբաղյան շարժման մասնակից անձինք ազգայնամոլներ ու ծայրահեղականներ են և որ ավելի լավ կլինի նրանք բոլորը ցրվեն և զբաղվեն իրենց գործով։ Կա մի հայտնի ասացվածք այն մասին, որ Ռուսաստանում որևէ չնախատեսված պրոբլեմ ծագելու դեպքում սկզբում ընդունում են բոլոր հնարավոր լուծումներից վատթարագույնը, իսկ հետո երկար ժամանակ հերոսաբար փորձում են շտկել թույլ տրված սխալը։ Բայց եթե նախկինում ժողովրդական զանգվածները, որոնք օտարացված էին իշխանությունից ու մնացած բոլոր շահերից, մի տեսակ անտարբեր էին ընդունում այն ամենը, ինչ արվում էր իշխանությունների կողմից, ապա այս անգամ, բավականին մեծ ակտիվությամբ հանդերձ, զանգվածները անմիջականորեն ներգրավվեցին քաղաքական պրոցեսին որպես շահագրգռված կողմ և թույլ չտվեցին, որ իրենց շահը այդքան հեշտությամբ ոտնահարվի։ Բազում տասնամյակների ընթացքում առաջին անգամ կենտրոնական իշխանության որոշման պատասխանը միանգամայն անսպասելի էր։ Ինչպես Ստեփանակերտի, այնպես էլ Երևանի ժողովրդական շարժումներն անտեսեցին ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանի առթիվ Կենտկոմի ընդունած որոշումը։ Հին մտածողության ավանդույթներով ապարատի ընդերքում ծնված որոշումը հաշվի չէր առնում ռեգիոնում ստեղծված իրավիճակի իրողությունները, դրանում նույնիսկ ցուցադրաբար փորձ չէր արվում խորամուխ լինելու պրոբլեմի էության մեջ։ Այդ արձագանքում բացահայտվեց ստեղծված քաղաքական պրոցեսի ևս մեկ կողմը։ Ակնհայտ դարձավ, որ հեղափոխական վերակառուցման քաղաքականություն վարող երկրի ղեկավարությունը հուսով է մի կողմից աշխուժացնել հասարակությանը և նրան դուրս բերել լեթարգիական վիճակից, խթանել հասարակության տարբեր հատվածների ինքնուրույն շարժումը, իսկ մյուս կողմից՝ պատրաստ չէ տեղափոխվել քաղաքական հարաբերությունների և ինքնուրույն ձևավորված շահերի ներդաշնակման քաղաքական լուծումների ոլորտ։ Հին ըմբռնման համաձայն, առանց կենտրոնական իշխանության հրահանգի ցանկացած ձևավորված շահ ոչ թե պարզապես իշխանությունների կողմից լուծում պահանջող շահ է, եթե այդ շահը բախվում է ուրիշ շահի հետ, այլ ավելի շուտ դիտվում է որպես կենտրոնական իշխանությանը նետված մարտահրավեր։ Ահա թե ինչու առաջին արձագանքը, այն երկրի համար ամենաբնորոշ արձագանքը, որտեղ առաջին անգամ առաջանում են շահեր, քաղաքական հարաբերություններ ու քաղաքականության ոլորտ, որտեղ ներդաշնակման կուլտուրա չկա հակասական շահերի այդ ոլորտում, ակնբախորեն ցուցադրեց, որ կենտրոնական իշխանությունը չի ուզում որոշակի հեռավորություն պահպանել տվյալ կոնֆլիկտից, չի զբաղեցնում միջնորդ դատավորի դիրք։ Ավելի շուտ, ընդհակառակը, առաջացած չհրահանգավորված շահը դիտելով որպես մարտահրավեր ձևավորված ստատուս-քվոյին, նա համերաշխվում է հակառակ կողմի դիրքորոշման հետ։ Ուստի և զարմանալի ոչինչ չկա, որ կենտրոնական իշխանությունը երկար ժամանակ կարծես գրավում էր ադրբեջանական շահերի պաշտպանության դիրք։ Դրա համար նրան մեղադրում էին ինչպես Հայաստանում, այնպես էլ ուրիշ շատ վայրերում, վկայակոչելով նման վարքագծի ամենատարբեր շարժառիթներ... Իրականում տվյալ դիրքորոշումը թելադրված էր քաղաքական համակարգում հենց կենտրոնի դերով, որը ոչ թե սուբյեկտիվ պատճառներով, այլ հին տիրական հարաբերությունների տրամաբանությամբ նպաստել է նրա կողմից «ադրբեջանամետ» դիրքորոշման հանգելուն։

Բարեբախտաբար, ավելի ուշ ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ մենք թևակոխել ենք լուրջ փոփոխությունների ուղի, թեև առանց լեգալացված քաղաքական ոլորտի, քաղաքագետների, քաղաքական կուլտուրայի։ Ճգնաժամի սկզբնական փուլը շարգելակեց երկրի զարգացումը, ավելի շուտ մենք առաջ ընթացանք, կուտակելով փորձ և յուրացնելով քաղաքական կուլտուրա։ Մ. Ս. Գորբաչովի դիմումը Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին խոշոր քայլ էր ստեղծված իրավիճակում ավելի հաշվեկշռված դիրքորոշում զբաղեցնելու ուղղությամբ։ Այն չվերացրեց Կենտկոմի առաջին որոշումը, բայց փաստորեն չհամաձայնեց դրան։ Առաջին անգամ չհրահանգավորված շահերը ճանաչվեցին իշխանությունների կողմից։ Քաղաքական ոլորտը սկսեց ընդլայնվել ու հեռու անցյալի՝ մինչև վերջ հասցված տոտալիտար համակարգում։ Զարմանալի ոչինչ չկա, որ այդ ոլորտը առանձնահատուկ պայմանների պատճառով առաջացավ Ղարաբաղում՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կառուցվածքների զուգադիպության և փոխգործակցության առկայությամբ, իսկ Հայաստանում գրեթե բացառապես զուգահեռ կառուցվածքների ստեղծման միջոցով՝ շրջանցելով պաշտոնական բյուրոկրատական-աստիճանակարգային կառուցվածքները։ Թեև Գորբաչովի դիմումը հսկայական առաջընթաց քայլ էր, բայց ընդհուպ մինչև 1988 թվականի հուլիսի 18-ը որևէ օպերատիվ որոշում ընդունելուց կենտրոնական իշխանության հրաժարվելու գործում իրենց դերը խաղացին այն գործոնները, որոնց մասին ավելի վաղ խոսեցինք և որոնք կաթվածի ենթարկեցին կենտրոնական իշխանությանը։ Այդ կաթվածահարությունը հատկապես ակնբախ դրսևորվեց հայ բնակչության սումգայիթյան ողբերգության նկատմամբ վերաբերմունքի հարցում։ Չնայած երկու ժողովուրդներին ուղղված Գորբաչովի դիմումի մեջ բազում նոր տարրերի առկայությանը, իրականում ո՛չ վարչակարգը, ո՛չ քաղաքական ղեկավարությունը դեռ պատրաստ չէին բյուրոկրատական, ապարատային քաղաքականությունից անցնել իրո՛ք դեմոկրատական քաղաքականության։ Ղեկավարությունը չկարողացավ կենտրոնական իշխանության համար համապատասխան տեղ գտնել ստեղծված նոր պայմաններում։ Հենց դրանով եմ ես բացատրում Սումգայիթի իրադարձությունների նկատմամբ նրա արձագանքը։ Քանի որ ամեն ինչ տեղի է ունենում առանց կենտրոնական իշխանությունների վերահսկողության և հրահանգի, ինչը տիրական հարաբերությունների հին տրամաբանության համաձայն կասկածի տակ դրեց գոյություն ունեցող վարչակարգի լեգիտիմությունը, ապա փորձ ձեռնարկվեց լռության մատնելու այդ քաղաքում կատարված եղեռնագործությունների ինչպես մասշտաբները, այնպես էլ հրեշավորությունը։ Ըստ երևույթին այնքան մեծ էր ղեկավարության վիրավորանքն ու դժգոհությունը, որ ամեն ինչ այնպես չի տեղի ունենում, ինչպես իրենք են ուզում և որ ամբողջ իրավիճակը դուրս է եկել վերահսկողությունից, որ նրանք չկարողացան կամ չցանկացան իրարից առանձնացնել ստեղծված իրավիճակի երկու կարևոր պահ։ Եթե ճգնաժամի առաջին փուլում Ղարաբաղը Հայաստանին հանձնելու առթիվ հարցի լուծումից ինքնակամ հրաժարումը ինչ-որ կերպ կարելի էր բացատրել քաղաքական կուլտուրայի, քաղաքական մեխանիզմի բացակայությամբ, ուրիշ ռեգիոններում իրադարձությունների զարգացման անկանխատեսելիության հանդեպ երկյուղով, ամբողջությամբ վերցված տեղի ունեցող իրադարձությունները իմաստավորելու անպատրաստակամությամբ, ապա ինձ թվում է, որ Սումգայիթի նկատմամբ արձագանքը պարզապես հանցավոր էր։ Այստեղ լիովին դրսևորվեց քաղաքական իշխանության կաթվածահարությունը։ Վարչակարգը, որն ստեղծվել էր բռնության շնորհիվ և որը մշտապես հենվում էր ուժային կառուցվածքների վրա և պատրաստ էր ամենուրեք ուժ գործադրել, առաջին անգամ փաստորեն հնարավորություն ստացավ արագ և արդյունավետորեն գործադրել այդ ուժը ստեղծված իրավիճակը վճռականորեն կանխելու նպատակով, բայց փաստորեն ոչինչ չարեց դրա համար։ Մի կողմից՝ իշխանության կաթվածահարությունը, մյուս կողմից՝ անցած ժամանակների ոգով ստեղծված իրավիճակը համապատասխան ձևով գնահատել չցանկանալը։ Մարզային խորհրդի որոշման (տվյալ մարմնի սահմանադրական իրավունքը), Երևանի ցույցերի (քաղաքացիների սահմանադրական իրավունքը, ցույցերը, ինչպես ասաց Մ. Ս. Գորբաչովը Հարավսլավիայում, հակասոցիալիստական բնույթ չէին կրում) և Սումգայիթում հայերի զանգվածային կոտորածի ու այդ քաղաքից հազարավոր հայ գաղթականների բախտի հետ կապված պրոբլեմի միջև հավասարության նշան դնելու փորձը քաղաքական, իրավաբանական և բարոյական տեսակետից մեծ վնաս պատճառեց կենտրոնական իշխանության հեղինակությանը։ Դա հիմք ծառայեց մեկ անգամ ևս կենտրոնական իշխանություններին մեղադրել հակահայկական տրամադրությունների համար։ Կենտրոնական իշխանության այդ դիրքորոշումը մեկ անգամ ևս ցուցադրեց քաղաքական կամքի կաթվածահարությունը, կողմնորոշման անընդունակությունը։

Դժբախտաբար, ցանկանալով բյուրոկրատական ոլորտից անցնել հրապարակային քաղաքականության ոլորտ, միաժամանակ հատկապես ճգնաժամերի պահին լռեցնելով հասարակայնությանը և զանգվածային լրատվության միջոցներին, որոնք կարող էին նպաստել ստեղծված իրավիճակի պարզաբանմանը, կենտրոնական իշխանությունը տվյալ պահին օտարացավ հասարակության իրական կյանքից, ինչն ամբողջությամբ վերցված բացասաբար ազդեց վերակառուցման ու հրապարակայնության ամբողջ ընթացքի վրա։ Սումգայիթը վերակառուցման շրջանում մեր ներքին կյանքի կենտրոնական իրադարձությունն է։ Այդ իրադարձություններից համապատասխան հետևություններ անելու կենտրոնական իշխանությունների ընդունակությունից է մեծապես կախված վերակառուցման ապագան։

Իմ կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինեին կենտրոնական իշխանության գործողությունները Սումգայիթի իրադարձությունների շրջանում և հետո։ Նախ, պետք էր Սումգայիթի իրադարձություններն առանձնացնել Ղարաբաղի պրոբլեմից և ղարաբաղյան շարժումից ու երկրի բնակչությանը պարզաբանել այդ երևույթների միանգամայն տարբեր բնույթը։ Թեև առաջին հայացքից թվում է, թե առաջինը դարձավ երկրորդի հետևանքը։ Ցավոք, կենտրոնական իշխանությունը մինչև օրս չի դիմել այդ քայլին։ Հնարավոր է, որ կենտրոնական իշխանությունները երկյուղ կրեցին, որ երկու երևույթների տարանջատումը ղարաբաղյան շարժմանը լեգալ բնույթ կհաղորդեր, ինչին կենտրոնական իշխանությունը մինչև օրս պատրաստ չէ։ Կենտրոնական իշխանության վիճակը բարդացավ նաև նրանով, որ Հայաստանում նախկին ղեկավարության օրոք խոր անդունդ էր ընկած պաշտոնական կուսակցական-պետական կառուցվածքների և ղարաբաղյան շարժման միջև։ Հանրապետության նոր ղեկավարությունը առաջին ամիսներին չկարողացավ օգտվել քաղաքական ճգնաժամի զարգացման ավելի բարենպաստ պայմաններից և հաղթահարել զանգվածային հասարակական շարժման հետ խզումը։ Ցավոք, կենտրոնական իշխանության սխալներին տեղի իշխանությունն ավելացրեց մի շարք սեփական սխալներ, ինչն էլ ավելի խորացրեց ճգնաժամը հանրապետությունում։ Դա ի վերջո հանգեցրեց կենտրոնական իշխանության միջամտությանը, բայց, ցավոք, այդ միջամտության ձևերն ու մեթոդները և ընտրված ժամանակը խիստ անհաջող էին, որպեսզի կարելի լիներ ակնկալել ճգնաժամի լուծում կամ դրական առաջընթաց այդ ճանապարհին։

Ինձ խիստ ողբերգական է թվում, որ բաց թողնվեց Սումգայիթին ժամանակին ու համապատասխան ձևով արձագանքելու հնարավորությունը։ Կենտրոնական իշխանությանը չհաջողվեց չեզոքացնել առաջացած պրոբլեմները և հասարակայնությանը ցույց տալ, որ ինքը գիտակցում է և պատրաստ է տալ անհրաժեշտ պատասխաններ։ Միանշանակ ցույց տրվեց, որ առաջ շարժվելով դեպի իրավական պետության ստեղծում, նա քննության է առնելու քաղաքականության ոլորտի ձևավորվող չհրահանգավորված շահերը և դեմոկրատացման ու համապատասխան պայմանների ստեղծման համեմատ դրանք լուծելու է իրավունքի նորմերի ոգով։ Միաժամանակ չհայտարարվեց, որ իշխանությունը առանձնացնում է քրեական, շովինիստական-ջարդարարական գործողությունը իրավունքի և օրինականության շրջանակներում կատարվող գործողություններից։ Թե քաղաքական, թե իրավաբանական և թե բարոյական տեսանկյունից դատապարտելի է ղարաբաղյան շարժման շրջանակներում առկա այդ հակադիր պրոցեսները մեկ ծրարով ներկայացնելու փորձը։ Այդ հարցում իրենց վատ ծառայությունը մատուցեցին զանգվածային լրատվության միջոցները՝ ժողովուրդների բարեկամության ու սիրո տեսարան սարքելով հենց այդ ողբերգական օրերին, և դատավարություն-խեղկատակությունը, որի մասին թեկուզ ինչ-որ տեղեկություն ստանալու համար Հայաստանում մարդիկ ստիպված էին մի քանի անգամ համազգային գործադուլ անել։

Քաղաքական ճգնաժամի առաջին փուլը ցույց տվեց, որ կենտրոնական իշխանությունը, փորձելով խույս տալ անցյալի մեթոդներից, միաժամանակ մշտապես անդրադառնում էր դրանց, կատարելով հետընթաց շարժումներ, ճիշտ է, այդ ճանապարհին ձեռք բերելով որոշակի քաղաքական կուլտուրա։ Նաև ակնհայտ դարձավ, որ քաղաքականության ոլորտում իշխանությունների կուլտուրայի աճը առայժմ հետ է մնում ինքնագործ հասարակական շարժումների քաղաքական կուլտուրայից։ Հենց այդ պատճառով էլ կենտրոնական իշխանությունը մշտապես ուշանում էր այս կամ այն որոշումներն ընդունելիս կամ պարզապես սխալ ու վնասակար որոշումներ էր ընդունում։ Սակայն ինչ էլ որ լիներ, փետրվարից մեր երկրում երևան եկած քաղաքականության ոլորտը անշեղորեն ընդլայնվում էր։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1988 թվականի հուլիսի 18-ի նիստը չնպաստեց լարվածության վերացմանը և ցուցադրեց քաղաքական կամքի դեռ պահպանվող կաթվածահարությունը, քանի որ չհաջողվեց փոխզիջում գտնել և հասնել կենտրոնական իշխանությանը քաղաքական ինստիտուտի վերածելուն, որտեղ պրոբլեմները լուծվում են ոչ թե բռնի, այլ քաղաքական միջոցներով։ Սակայն պետք է նշել, որ փետրվարից մինչև հուլիս մեր քաղաքական չափանիշը զգալիորեն ավելի բարդացավ։ Թեև այդ կոնֆլիկտի վերաբերյալ ժամանակին ու ճիշտ ոչ մի որոշում չընդունվեց, այնուամենայնիվ, այդ ընթացքում ինչ-որ կարևոր բան երևան եկավ քաղաքական ոլորտում, ինչը դրսևորվեց Գերագույն խորհրդի նախագահության հաջորդ նիստում՝ երկրի մի ուրիշ ռեգիոնում ծագած մի այլ ճգնաժամի առթիվ։ Ես նկատի ունեմ այն փաստը, որ Ռուսաստանի հազարամյա պատմության ընթացքում մենք ականատես եղանք այն բանին, որ աշխատեց սահմանադրական մեխանիզմը, որը ոչ ոք, և ինչպես հետո դա պարզվեց, ամենից առաջ նրա ստեղծողները, լրջորեն չէր ընդունում և ոչ ոք չէր կարծում, որ սահմանադրությունը բացի դեկլարատիվ դերից կարող է ուրիշ դեր խաղալ մեր քաղաքական համակարգի պայմաններում։ Մի կողմից, Երևանում և Ստեփանակերտում ղարաբաղյան շարժման հաստատակամությունն ու համառությունը, մյուս կողմից, կենտրոնում քաղաքական կուլտուրայի երևան գալը, քանի որ փաստորեն այլ ընտրությունը կենտրոնի կողմից հավասարազոր կլիներ երկրում ստեղծված տոտալիտար վարչակարգի աստիճանական բացասման ուղուց շեղվելուն, հանգեցրին այն բանին, որ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանի որոշումը, որը մի ժամանակ հրապարակավ նշավակվել էր որպես ապօրինի, մտավ Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նստաշրջանների օրակարգ։ Անսպասելիորեն պարզվեց, որ սահմանադրության մեջ հստակ չեն սահմանված երկրի ազգային-պետական կառուցվածքի հիմնական սկզբունքներն ու նորմերը։ Ազգերի ինքնորոշման իրավունքը հակասում էր հանրապետության ինքնիշխանության սկզբունքին, և շատ իրավաբաններ հրապարակավ այնպիսի տեսք ընդունեցին, որ իրենք չեն հասկանում, որ առաջին սկզբունքը ԽՍՀՄ-ի կազմավորման ժամանակ Լենինի կողմից ճանաչվել էր որպես առաջնային սկզբունք և ընկած է միջազգային իրավունքի հիմքում։ Մի քանիսն առհասարակ փորձում էին պրոբլեմի էությունն ուղղել կեղծ հուն, գտնելով, որ Ղարաբաղի դեպքում մենք գործ ունենք մի հանրապետության կողմից մյուսին տարածքային պահանջներ ներկայացնելու հետ։ Այդօրինակ հայտարարությունների անհիմնությունն ակնհայտ էր, քանի որ տվյալ դեպքում ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանի որոշումը ընդամենը միայն ազգային ինքնավար կազմավորման կամքի պարզ արտահայտում էր։ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանը մարզն իր կազմի մեջ ընդունելու խնդրանքով կարող էր դիմել ոչ միայն Հայաստանին, այլև ցանկացած այլ հանրապետության։ Իրավաբանները, իսկ նրանցից հետո հասարակայնությունն ու կենտրոնական իշխանությունը որոշեցին, որ առաջացել է սահմանադրական փակուղի և այդ պատճառով իբր հնարավոր չէ գործող սահմանադրության շրջանակներում բավարարել ԼՂԻՄ-ի պահանջը։ Սակայն ինձ թվում է, որ իրավաբանները չեն նկատել, որ պետական ինքնիշխանության սկզբունքը վեր դասելով ազգի ինքնորոշման իրավունքից, սահմանադրության նման մեկնաբանմամբ կասկածի տակ են դնում այդ նույն սահմանադրության ուրիշ, ոչ պակաս կարևոր մասեր։

Հասկանալի չէ, թե ինչու չի կարելի, օգտագործելով ինքնավար ազգատարածքային կազմավորման ինքնորոշման իրավունքը, ԽՍՀ Միության շրջանակներում մի հանրապետությունից անջատվել և մտնել մյուսի մեջ, բայց կարելի է միութենական հանրապետության համար այդ իրավունքն օգտագործելով, ընդհանրապես դուրս գալ ԽՍՀՄ-ի կազմից։ Եթե առաջին դեպքում խախտվում է միութենական հանրապետության պետական ինքնիշխանությունը, ապա կարելի՞ է արդյոք հետևություն անել, որ Խորհրդային Միությունն ինքնիշխան պետություն չէ։ Ինչո՞ւ երկրի համար մի ավելի լուրջ դեպքում կոնֆլիկտ չկա ազգի ինքնորոշման սկզբունքի և պետական ինքնիշխանության միջև, իսկ մյուս դեպքում անհաղթահարելի հակասություն կա։ Գուցե այն պատճառով, որ Ադրբեջանի կամ ուրիշ հանրապետության ինքնիշխանությունն ավելի առանձնահատուկ է, քան ԽՍՀ Միության ինքնիշխանությո՞ւնը։ Կուզենայինք այս պատասխանը ստանալ իրավաբաններից, որոնք կամ տգիտության պատճառով, կամ սոցիալական պատվեր կատարելով շտապեցին այդպես անհեթեթորեն մեկնաբանել հիմնական օրենքը։ Այդուհանդերձ, քաղաքական ճգնաժամի առաջին փուլն ավարտվեց բարձր նոտայով՝ Գերագույն խորհրդի Նախագահության հուլիսի 18-ի նիստը, որը լայնորեն հայտնի է հեռուստադիտողներին և որն ամենայն հավանականությամբ նվազ դրական տրամադրություն թողեց ոչ միայն ժողովրդի, այլև ամենից առաջ գլխավոր գործող անձանց վրա իր ձևով և ընդունված

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

որոշումների բովանդակությամբ, 1988 թվականի առաջին քաղաքական ճգնաժամի ավարտական փուլն էր։ Չհաջողվեց հասնել իսկական, կենսունակ փոխզիջման, ինչն էլ կանխորոշեց ճգնաժամի հետագա խորացումը և մի քանի ամիս հետո հանգեցրեց այն բանին, որ ղարաբաղյան ճգնաժամը բռնկի նոր ուժով։ Սակայն մի քիչ շեղվենք այդ ճգնաժամից, քանի որ ղարաբաղյան ճգնաժամի առաջին և երկրորդ փուլերի միջև սեպվեց ևս մեկ ճգնաժամ՝ Մերձբալթիկայի իրադարձությունները։

Խոսքը վերաբերում է էստոնական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի հայտնի որոշումներին, ըստ որոնց այդ մարմնին միակողմանի կարգով իրավունք էր տրվում կասեցնել էստոնիայի պրոբլեմների վերաբերյալ իշխանության կենտրոնական մարմինների որոշումները։

Այդ փաստը կենտրոն-ծայրամաս դիմակայության նշաձողը ինքնավար մարզի մակարդակից բարձրացրեց միութենական հանրապետության մակարդակի։ Տվյալ որոշումն արդեն մարտահրավեր էր ոչ թե կենտրոն-ծայրամաս ձևավորված հարաբերությունների հին ձևին, ոչ թե խնդրանք, որը բխում էր մարզի համար սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներից և համապատասխան ձևով արձագանքելու անհրաժեշտությունից, այլ մարտահրավեր էր իր սահմանադրությամբ սահմանված իրավունքների և լիազորությունների սահմանափակմանը։ Ամենայն հավանականությամբ ղարաբաղյան ճգնաժամի երկարատև զարգացման ու խորացման դասերը և 1988 թվականի հուլիսի 18-ի՝ Գերագույն խորհրդի նախագահության անհաջող նիստը որոշակի փորձ տվեցին երկրի բարձրագույն ղեկավարությանը։ Դա հնարավորություն ընձեռեց Գերագույն խորհրդի նախագահության հերթական նիստում խուսափել շատ սխալներից, որ թույլ էին տրվել Ղարաբաղի հարցի առթիվ կայացած նիստում։ Թեև կենտրոնական իշխանության տեսանկյունից իր լեգիտիմությանը նետված ուղղակի մարտահրավերը ավելի ծանր արարք էր, քան ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի՝ իր հարցը քննարկելու համեստ խնդրանքը, այդուհանդերձ, այս անգամ արձագանքը շշմեցուցիչ էր, և դա թույլ է տալիս մտածել, որ քաղաքական ոլորտի գոյության մի քանի ամսվա ընթացքում մեզ մոտ սկսում են երևան գալ բառիս բուն իմաստով քաղաքագետներ և որոշակի քաղաքական կուլտուրա։ Իհարկե, այս նիստում էլ ելույթ ունեցողներից մի քանիսը փորձում էին էստոնացիներին մեղադրել «հին, բարի ավանդույթների» ոգով։ Այնուամենայնիվ, այդ նիստում գերիշխող խոսակցությունը ոչ թե կոպիտ բղավոցների և մշակումների, այլ իրավաբանական հիմնավորումների և սահմանադրական նորմերի ոլորտ փոխադրելու միտումն էր։ Այդ պատում քաղաքական հասունությունը դրսևորվեց այն բանի ըմբռնմամբ, որ չի կարելի դիմել մահակին, երբ որևէ մեկը առանց հրահանգի ծպտուն է հանել։ Քանի որ կենտրոնական իշխանությունը իր գործողություններով հրահրել ու հող է նախապատրաստել քաղաքական ոլորտի համար, ապա նա պետք է պատրաստ լինի այն բանին, որ չհրահանգավորված գործողությունները բոլոր կողմերից կարող են ստեղծել ճգնաժամ և լարվածություն։ Եթե իշխանությունը ձգտում է իրոք հեղափոխություն իրականացնել վերևից և հասնել իրավական պետության ստեղծման, ապա նա պետք է ընդունի հասարակության մեջ անկախ շահերի առաջացման հնարավորությունն ու լեգիտիմությունը և բոլոր հնարավոր ոչ բռնի միջոցներով իշխանության վրա ճնշում գործադրելու նրանց իրավունքը։ Տվյալ փուլում այդ հարցը առանձնահատուկ հրատապություն է ստանում, քանի որ հասարակության մեջ առայժմ չկան այդ շահերը քաղաքական որոշումներ ընդունելու ոլորտ փոխադրելու համապատասխան մեխանիզմներ, իսկ առկա գրաքննության պայմաններում շատ շահեր ի վիճակի չեն նույնիսկ իրենց մասին հայտարարել զանգվածային լրատվության միջոցներում։ Միայն այդ ճանապարհին արդյունավետ, երբեմն խիստ բարդ ու լարված փոխգործակցության միջոցով է հնարավոր ստեղծել նոր քաղաքական կուլտուրա և քաղաքական պրոցեսի սուբյեկտներ։

Հանրագումարի բերելով այդ ճգնաժամի քննարկման արդյունքները, մեկ անգամ ևս կուզենայինք ընդգծել, որ դրական արդյունքը և ճգնաժամից դուրս գալու ելքը ոչ թե այդ ճգնաժամի ուժեղացումն ու խորացումն էր կենտրոնական իշխանության կողմից, որը կարող էր էստոնական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի աննախադեպ որոշմանը հանգեցրած բոլոր պրոբլեմները չեղյալ հայտարարել և էստոնացիներին հրամայել լռել, այլ պրոբլեմի էության բացահայտումը և փոխադրումը ուրիշ, քաղաքական բնագավառ։ Դեմոկրատական քաղաքականության միջուկը ինչպես քաղաքական ոլորտում, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցներում տարբեր շահերի բախման հրապարակային բնույթն է, ոլորտներ, որտեղ չկան արգելքներ և մեղավորներ, որտեղ փոքրամասնության դիրքորոշումը նույնքան ուշադիր է լսվում, որքան մեծամասնության դիրքորոշումը, որտեղ իր կարծիքն ունենալու և այդ կարծիքը պաշտպանելու փոքրամասնության իրավունքը ապահովվում է օրենքով։ Ըստ իս՝ էստոնական ճգնաժամի դեպքում ամբողջությամբ վերցված դրսևորվեց քաղաքական իմաստնություն։ Պրոբլեմի նկատմամբ նման մոտեցումը դրեց կենտրոնական իշխանության և իշխանության տեղական մարմինների միջև քաղաքական հարաբերությունների հիմքերը։

Այժմ անդրադառնանք ղարաբաղյան ճգնաժամի երկրորդ փուլին, որովհետև մինչև օրս շարունակվող այդ ճգնաժամը ցույց է տալիս, որ այս կամ այն որոշումներն ընդունելիս կենտրոնական իշխանությունը հաճախ հետընթաց շարժումներ է կատարում, ինչը թույլ է տալիս կասկածել այն բանին, որ էստոնական դեպքը կդառնա նորմա, իսկ Ղարաբաղի հարցի առթիվ դիրքորոշումը ավելի շուտ արդեն անցած փուլ է։

1988 թվականի հուլիսի 18-ի որոշումը ոչ միայն չվերացրեց լարվածությունն Անդրկովկասում, այլև նույնիսկ նպաստեց նրա հետագա մեծացմանը։ Դրա հետևանքով, թեպետ տարբեր պատճառներով, Հայաստանի և Ադրբեջանի նոր ղեկավարները վարկաբեկվեցին մեծ մասամբ կենտրոնական իշխանության կողմից նախկինում թույլ տված մի շարք սխալների շնորհիվ։ Հայաստանում պատճառները հետևյալն էին. կենտրոնական գերատեսչությունները երկար ժամանակ զուգորդում էին կեղծիքն ու զրպարտանքը իրադարձությունների մասին, կենտրոնական հեռուստատեսությունը և մամուլը խեղաթյուրում էին ղարաբաղյան շարժման էությունն ու բնույթը, իշխանությունը խուլ ու համր էր ձևանում Ղարաբաղի ժողովրդի կամքի մասին որևէ փաստարկ լսելու հարցում, փորձում էր ծածկել Սումգայիթի հետ կապված պրոբլեմները, քաղաքական գնահատական չէր տալիս այդ իրադարձություններին, փորձում էր դատավարություններն անցկացնել երկրի տարբեր վայրերում, և դրանք թաքցնել հասարակայնությունից, խոստանում էր փոխզիջումային լուծում և այլն։ Քանի որ Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարությունը քննադատական դիրք չգրավեց այդ որոշումների նկատմամբ, ապա նա ինքնաբերաբար իրեն զրկեց ամեն մի լեգիտիմությունից և լրիվ օտարացավ ժողովրդական շարժումից։ Շարժման սկզբից առաջին անգամ ընձեռված հնարավորությունը, երբ տեղի իշխանությունը կարող էր վերցնել նախաձեռնությունը «Ղարաբաղ» կոմիտեից և վերացնել իր և ժողովրդի միջև խորացող անդունդը, ձեռքից բաց թողնվեց։ «Ղարաբաղ» կոմիտեն զանգվածների համար կրկին դարձավ ժողովրդի շահերի միակ արտահայտիչ և ղարաբաղյան հարցի արդար լուծման մարտիկ։

Ադրբեջանի ղեկավարությունը նույնպես կորցրեց ամեն մի լեգիտիմություն, քանի որ կենտրոնական իշխանությունն իր միակողմանի դիրքորոշմամբ (թեև, ինչպես վերը նշվեց՝ անգիտակցաբար ադրբեջանամետ) երկար ժամանակ Ադրբեջանի ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ ամրապնդել էր այն միտքը, որ ամբողջ գործը ոչինչ չարժե։ Ամեն ինչ արել են մի խումբ ծայրահեղականներ, ոչ մի Սումգայիթ էլ չի եղել, դատելով ըստ զանգվածային լրատվության միջոցների՝ հենց այդ ժամանակ էր երկու ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության ծաղկման բարձրակետը։ Կենտրոնի կողմից ստեղծված նման իրավիճակում ամբողջ ադրբեջանական ժողովուրդը կենտրոնական իշխանության և երկրի տարբեր ռեգիոններից այդ առթիվ օգնության կանչված բազմաթիվ աշխատավորների հետ միանգամայն անկեղծորեն վրդովվում էին և ցասումնաճառ հղում ադրբեջանցիների և կենտրոնական կառավարության կողմից բարերարության արժանացած Լեռնային Ղարաբաղի երախտամոռ հայերի և Հայաստանի ծայրահեղականների հասցեին։ Զարմանալի ոչինչ չկա, որ կենտրոնական իշխանությունների գործողությունների շնորհիվ ստեղծված այդօրինակ հոգեբանական ու քաղաքական իրավիճակում Ադրբեջանի զանգվածային հասարակական կարծիքի համար միանգամայն անհասկանալի էին Սումգայիթի ջարդարարների նկատմամբ դատավարությունը և ԼՂԻՄ-ի ինքնուրույնության ինչ-որ երաշխիքների պահանջը։

Երկար ժամանակ միանշանակ այն բանը պրոպագանդելը, որ բոլոր անկարգությունների մեղավորները հայերն են, որ Սումգայիթում ոչ մի ահավոր բան տեղի չի ունեցել, ամեն ինչ պետք է մնա առաջվա պես, ունեցավ իր ներգործությունը։ Եվ հենց որ կենտրոնական իշխանությունը փորձեց խուսանավել, բախվեց այդ պրոպագանդայի արդյունքներին։ Սումգայիթի մարդասպանները անմիջապես դարձան ազգային հերոսներ, Ադրբեջանը բոլոր այլախոհներից մաքրելու և Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը վերացնելու կոչեր հնչեցին... Իսկ հետո ինչպե՞ս ծավալվեց ճգնաժամը։

Հայաստանում աշնանը ճգնաժամը թևակոխեց նոր փուլ. ղարաբաղյան շարժումը, որն սկսվել էր որպես ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջանի որոշումների պաշտպանության շարժում, դուրս եկավ իր շրջանակներից և դարձավ ակտիվ քաղաքական գործոն՝ ժողովրդից կուսակցական-պետական կառուցվածքների մեկուսացման պայմաններում։ Հայաստանի իշխանությունների և ղարաբաղյան շարժման միջև օտարացման նոր փուլն սկսվեց այն ժամանակ, երբ ղարաբաղյան շարժումը փորձում էր ճակատ առ ճակատ բախվել իշխանությունների հետ։ «Ղարաբաղ» կոմիտեի համար երևան եկավ իր ոչ ֆորմալ իշխանությունը մինչև հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները լեգիտիմացնելու հնարավորություն։

Հերթական անգամ հանրապետության կուսակցական իշխանությունը չկողմնորոշվեց ստեղծված իրավիճակում։ Ընտրություններում իշխանությունների կողմից թեկնածուներ առաջադրված մինիստրներն ու Կենտկոմի ապարատի աշխատողները ջախջախիչ պարտություն կրեցին։ Հանրապետությունում խորացավ [illegible] այդ ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու և պաշտոնական իշխանությունների հրապարակային վարկաբեկման պատճառով։ Ակնհայտ դարձավ, որ կենտրոնից չմիջամտելու դեպքում հերթական ընդհանուր ընտրությունները վերջնական պարզություն կմտցնեն հանրապետության իրավիճակում և վերջ կդնեն երկիշխանությանը, իշխանության բոլոր ընտրովի մարմինները համալրելով ժողովրդական շարժման ներկայացուցիչներով։ Կրկնակի ընտրությունները և դրանցում «Ղարաբաղ» կոմիտեի ներկայացուցիչների հաղթանակը հաստատեցին իրադարձությունների այդօրինակ զարգացման անխուսափելիությունը։ «Ղարաբաղ» կոմիտեի հեղինակության ու ազդեցության հետագա աճին նպաստեցին նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք էին գաղթականների ճակատագրի հարցի առթիվ կենտրոնական ու տեղական իշխանությունների անգործությունը, շարունակվող անհասկանալի խաղերը Սումգայիթի ջարդարարների դատավարության շուրջը, Ադրբեջանում հայերի պաշտպանության և կյանքի անվտանգության երաշխիքների հարցերում անգործությունը և այլն։ Ադրբեջանում ճգնաժամի սրման նոր ալիքը և Կիրովաբադում, Խոջալուում, Նախիջևանում ջարդերի նոր փուլը պատասխան գործողություններ առաջացրին Հայաստանում։ Նման լարված իրավիճակում կենտրոնական իշխանությունը որևէ կոնստրուկտիվ որոշում ընդունելու փոխարեն ռազմական դրություն մտցրեց Բաքվում և Երևանում, որպեսզի Բաքվում կասեցնի կրքերի սանձարձակությունը Լենինի հրապարակում և ջարդերը հանրապետությունում, Երևանում՝ որպեսզի ընդհատի հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը և հնարավորություն չտա, որ նա նոր չհրահանգավորված քաղաքական որոշումներ ընդունի։

Այդ ճգնաժամի ամենալարված պահին Հայաստանում տեղի ունեցավ երկրաշարժ, որը նոր չափանիշ մտցրեց այդ առանց այն էլ խիստ բարդ իրավիճակում։ Մ. Ս. Գորբաչովի Երևան ժամանելուց հետո սկսվեց ճգնաժամի նոր փուլը։ Ժամանումը կազմակերպված էր խորհրդային մարդկանց համար համապատասխան մթնոլորտի ստեղծումով։ Ինչպես ավելի ուշ պարզվեց, հենց ղեկավարությունը գերի էր մնացել իր իսկ ստեղծած մթնոլորտին և լավ չէր պատկերացնում Հայաստանի իսկական իրավիճակը։ Ենթադրվում էր, որ տարերային աղետը ինքնաբերաբար վերացնում էր մինչ այդ գոյություն ունեցող բոլոր պրոբլեմները, ինչ-որ չգրված թղթի իրավիճակ ստեղծում, որից սկսվում է հայ ժողովրդի նոր պատմությունը։ Միայն դրանով կարելի էր բացատրել կենտրոնական իշխանությունների խոշոր վրիպումը, երբ երկրաշարժի փաստի մասին հայտարարելուց անմիջապես հետո, մի քանի րոպե հաղորդեցին եղբայրական ադրբեջանական ժողովրդի ցավակցությունն ու կարեկցանքը՝ իրենց մոտ աղետի զոհերին ընդունելու և նրանց եղբայրական օգնություն ցուցաբերելու առաջարկությամբ։ Հայտնի չէ, թե ում խղճի վրա է ծանրացած առաջինն այդ ցավակցությունը հաղորդելու կարգադրությունը։ Կասկածի չենթարկելով այն փաստը, որ շատ ադրբեջանցիներ անկեղծորեն ցավում էին Հայաստանում կատարվածի համար, կարծում ենք, սակայն, որ այն իրավիճակում, երբ դեռ տարերային աղետի օրը Ադրբեջանից հայ գաղթականները զանգվածաբար լցվել էին հանրապետություն, նմանօրինակ ընդգծված հաղորդումը վկայում է կա՛մ հաղորդումը հրահանգավորած մարդու անհուսալի տխմարությունը, կա՛մ ցինիզմը, կա՛մ էլ իր անհամապատասխանությունը զբաղեցրած տեղին։ Ցինովնիկի կողմից այդօրինակ սանկցիան միանգամայն ներգծվում է մեր հին ապարատային քաղաքական կուլտուրայի մեջ. ավելի շուտ զեկուցել, որ ժողովուրդների բարեկամությունը վերականգնվել է, ժողովուրդների միջև եղբայրական հաղթանակը ուղղված է տարրերքի ուժերի դեմ։ Թեկուզ ինչ-որ բանականությամբ օժտված մարդիկ հասկանում են, որ նման հրաշալի փոխակերպումներ չեն լինում կախարդական փայտիկի շարժումով, ուստի և կենտրոնական հեռուստատեսությամբ այդօրինակ դիմումը Հայաստանում ոչինչ, բացի զայրույթի և դժգոհության զգացումից, չէր կարող առաջացնել։ Հայաստանում դա ընկալվեց որպես պետական կարեկցանք պետական անձանց կողմից, մոսկովյան ղեկավարությանը ժողովուրդների բարեկամության գծով հաշվետվություն ներկայացնելու փորձ։ Դժբախտաբար, հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ իրական վերաբերմունքի փոխարեն ընդունվեցին ցարգված գնացքներ, որոնք եկել էին Ադրբեջանի տարածքով, հրավառություններ եղան Աղջաբեդում, որի մասին սովորված էր գրել կենտրոնական մամուլը, հաղորդել կենտրոնական հեռուստատեսությունը, փորձելով ինչ-որ կերպ շտկել իրավիճակը։ Նաև ենթադրվում էր, որ երկրաշարժից հետո Հայաստանում իսկույն կմոռացվեր ինչպես Ղարաբաղի, այնպես էլ գաղթականների պրոբլեմը։ Տարբեր ազգությունների միլիոնավոր մարդկանց անկեղծ կարեկցանքը կենտրոնական հեռուստատեսությունը, ցավոք, որոշեց օգտագործել որպես առիթ մեծ ներկայացման համար, որտեղ հիմնական տեղը պետք է գրավեր մեր երկրի բոլոր ազգերի և ազգությունների միջև մեծ բարեկամության գաղափարը։ Այստեղ էլ գործի դրվեց հին մեխանիզմը։ Եթե մինչև երկրաշարժը մամուլում հաճախ էին հաղորդումներ երևում մեր երկրի գրեթե բոլոր ռեգիոններում ազգամիջյան հողի վրա տարբեր պրոբլեմների առաջացման մասին, ապա երկրաշարժից հետո իրավիճակը օգտագործվեց կրկին մյուս ծայրահեղության մեջ ընկնելու համար։ Հայ ժողովրդի հանդեպ կարեկցանքի մասին բոլոր հաղորդումներում առկա էր այն միտքը, որ մեր ժողովուրդների սերն ու բարեկամությունը, համերաշխությունն ու համախմբվածությունը այն են, ինչ որ մենք ունենք իրականում, իսկ մնացած ամեն ինչը, մասնավորապես վեճերն ու պրոբլեմները, իբր պատահական բաներ են։ Այդ կապակցությամբ համապատասխան ձևավորում ստացավ նաև Մ. Ս. Գորբաչովի այցը Երևան։ Մամուլը սկսեց երկինք հանել այն փաստը, որ նա ընդհատեց իր այցը Նյու Յորքում և հետաձգեց Կուբա և Անգլիա կատարելիք այցերը։ Գործողություններ, որոնք առհասարակ քաղաքակիրթ երկրների չափանիշներով միանգամայն շարքային են, հասկանալի և դեմոկրատական քաղաքական կուլտուրայի մի մասն են կազմում։ Դա վերաբերում է նաև երկրի տասնյակ հազարավոր քաղաքացիների զոհվելու առթիվ ազգային սուգ հայտարարելու փաստին։ Մեզ համար դրանք իրոք անհավատալի քայլեր էին ղեկավարության կողմից, քանի որ ավելի վաղ, նույնիսկ ավելի ողբերգական դեպքերի ժամանակ ոչ մի այդպիսի բան չէր ձեռնարկվում։ Տոտալիտար վարչակարգի համար մարդկանց կյանքը ոչ մի արժեք չուներ։ Այդ գործողությունները ցույց տվեցին, որ նոր պայմաններում վարչակարգը, որը ջանում է փոխվել դեպի դեմոկրատիայի կողմը, փորձում է այլ կերպ վերաբերվել իր քաղաքացիներին։ Սակայն թեկուզ իրոք փոխվել էր վարչակարգի վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ, բայց ժողովուրդն էլ արդեն այն չէր, ինչպիսին մինչև Հայաստանում տեղի ունեցած դեպքերի սկիզբն էր։ Ուստի և Գորբաչովի Երևան ժամանելու առթիվ մտահղացված ապոթեոզը, երբ՝ կուսակցության ու պետության լիդերի գլխավորությամբ բոլոր ժողովուրդները միասնական մղումով միավորվում են ընդհանուր աղետը հաղթահարելու համար, չստացվեց։ Հայաստանում, նույնիսկ այդ վշտալի պահին չէին մոռացել, ասենք՝ չէին էլ կարող մոռանալ ո՛չ Ղարաբաղի չլուծված պրոբլեմը, ո՛չ գաղթականների չլուծված պրոբլեմը, ո՛չ Սումգայիթի ջարդարարների գործի առթիվ դատավարության շուրջը անազնիվ, վիրավորական թղթախաղը, ո՛չ Գերագույն խորհրդի Նախագահության նիստը, ո՛չ ավելի քան տասը տառապալի ամիսներ շարունակ պրոբլեմի լուծումից կենտրոնական իշխանությունների ինքնամեկուսացումը։ Նրանք չէին մոռացել նաև միտինգներին ու գործադուլներին մասնակցած փաստորեն ամբողջ ժողովրդի հասցեին զրպարտանքներն ու վիրավորանքները, որոնք այդ ամիսներին հաղորդվում էին զանգվածային հաղորդակցության կանալներով, լռելով արդեն պարետային ժամի առկայության մասին։ Այսպիսով, որքան էլ ցավալի է, բայց մնում է միայն արձանագրել, որ չստացված ընդունելության համար ոչ մեկի չպետք է մեղադրել։ Կենտրոնական իշխանությունը և հանրապետության ղեկավարությունը մի շարք կոպիտ սխալներով ու վրիպումներով նախապատրաստեցին նման ընդունելությունը Երևանում։ Ավելին, Երևանից մեկնելուց առաջ կենտրոնական հեռուստատեսության թղթակցի հետ Մ. Ս. Գորբաչովի հարցազրույցը ճակատագրական էր և էլ ավելի խորացրեց քաղաքական ճգնաժամը Հայաստանում։

Ավաղ, ամեն ինչ տեղի ունեցավ հին, լավ հայտնի սխեմաներով։ Հարցազրույցի մի զգալի մասը նվիրվեց հենց կոմիտեի նշավակմանը։ Դրանից հետո ամբողջ մամուլը շարունակեց այդ թեման։ Եվ վատթարագույն ավանդույթներով, անկախ այն բանից, թե ինչի մասին էին տարերային աղետի վայրերից կենտրոնական հեռուստատեսության ռեպորտաժները կամ կենտրոնական թերթերի թղթակցությունները, ժուռնալիստները պահը չէին կորցնում «Ղարաբաղ» կոմիտեի «արարքների» մասին հարցազրույցի մտքերը բազմացնելու համար։ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությունից հետո ճգնաժամը թևակոխեց վերջին փուլը։ Ստեղծվեց տարօրինակ իրավիճակ։ Վերակառուցումը պայմաններ է ստեղծում չարտոնված հասարակական կազմակերպությունների ստեղծման համար։ Այդ կազմակերպությունները գործում են օրենքի շրջանակներում և հենց նրանց էլ, այն պատճառով, որ դեռ քաղաքական համակարգում չէին ստեղծվել բառիս բուն իմաստով քաղաքական ոլորտներ և լեգալ հիմքեր ոչ պետական կազմակերպությունների գործունեության համար ու բացակայում էր քաղաքական ճգնաժամերի լուծման քաղաքական մեխանիզմը, անհնազանդության դրսևորման դեպքում դառնում են բռնի ճնշման զոհ։ Ստեղծված իրավիճակից դուրս գալու ի՞նչ հնարավոր ելք կա։ Այստեղ իմ պատասխանը միանգամայն ակնհայտ է։

ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության ընդունած որոշումը առաջընթաց, բայց խիստ ուշացած քայլ էր։ Այդօրինակ որոշումը նույնիսկ ամռանը կարող էր կանխել իրավիճակի սրումը, կհանգստացներ ԼՂԻՄ-ի հայերին, հանրապետության ղեկավարությունը ավելի շուտ կվերահսկեր իրավիճակը և հասարակայնության շարժումը ավելի շուտ կգնար լայն հասարակական ճակատի ստեղծման ճանապարհով, ճակատ, որը կարող էր արդյունավետորեն համագործակցել իշխանությունների հետ։

Սակայն ցավոք այդպես չեղավ. հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ կայունացնել իրավիճակը, ընդհակառակը, այն ավելի սրվեց։ Ուստի այժմ անհրաժեշտ է այլևս չխորացնել ճգնաժամը, դրանով իսկ բարդացնելով՝ առանց այն էլ բարդ իրավիճակը ամբողջ վերակառուցման համար։ Մնում է հուսալ, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ստեղծած հանձնաժողովը ճիշտ որոշում կկայացնի ԼՂԻՄ-ի հայության արդարացի պահանջը լուծելու համար։ Չէ՞ որ պատմության այդ կնճռոտ հարցի դրական լուծումը բխում է ԽՍՀՄ-ի ստորագրած միջազգային փաստաթղթերի ոգուց և համապատասխանում է անկյունաքարային այն սկզբունքներին, որոնց վրա հիմնված է մեր Միությունը։ Ի՞նչ հետևության կարելի է հանգել վերն ասվածից։

Փորձելով արդիականանալ, մեր քաղաքական վարչակարգը ստեղծեց կապի նոր կանալներ և շահերի կոնֆլիկտով իսկական քաղաքական ոլորտի ձևավորման նախադրյալներ։ Սակայն անցումային շրջանում, որը մենք ապրում ենք, իր առջև նմանօրինակ քաղաքական վարչակարգի արդիականացման խնդիրներ առաջադրող կենտրոնական իշխանության համար շատ մեծ շքեղություն է այդքան երկար ժամանակ գտնվել կամքի կաթվածահարության վիճակում և միշտ ընթանալ իրադարձությունների հետևից, պատասխանելով միայն մարտահրավերներին, այն էլ բազում սխալներով և մեծ ուշացումով։ Այսօր վերակառուցման բախտը, արդիականացման հաջողությունը, ինչպես նաև Ղարաբաղի հարցի արդարացի լուծումը գլխավորապես կախված են այն բանից, թե կհաջողվի՞ արդյոք մոտ ժամանակներս հաղթահարել բարձրագույն իշխանության հապաղումը, կենտրոնում ստեղծել մեծ հեղինակություն և ուժեղ քաղաքական կամք, որ կենտրոնը հաստատակամորեն իր ձեռքին պահի նախաձեռնությունը և հետևողականորեն ռեֆորմներ անցկացնի բոլոր ուղղություններում։ Այլապես հարկ կլինի տխրությամբ արձանագրել, որ երիցս իրավացի էր Չաադաևը, պնդելով, որ այս երկրում պատմական հիշողություն չկա, որովհետև մենք ամեն օր սկսում ենք չգրված թղթից, ուստի և դատապարտված ենք այն բանին, որ ամեն օր կրկնենք միևնույն սխալները։ Իսկ ինչքա՞ն կուզենայինք, որ հիմա այլ կերպ լինի։

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՀՐԱՆՅԱՆ
Մոսկվա

Խմբագիր՝ Կ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ